

Racine

Յուլի 20, 1953

Արժանաշնորհ  
Արթուր ԲՀՆԿ. Սմբատեան  
Նախագահ Հոգաբարձութեան  
Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ  
Րէյսին, Ուիսք.:

Արժանաշնորհ Տէր Արթուր,

Ստացուած է ամսոյս 15 թուակիր Զեք տեղեկագրութիւնը որով կը  
յայտնէիք թէ Զեք նախագահութեամբ տեղի ունեցած է համայնքիդ հոգա-  
բարձական մասնակի ընտրութիւնը, եւ ներկայացնելով ամբողջական  
կազմը կը խնդրէիք վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի առնելով որ յիշեալ անձնաւորութիւնները կանոնաւոր կեր-  
պով ընտրուած են եւ կը վայելեն ընտրողներու մեծ մասին վստահու-  
թիւնը իբրեւ եկեղեցւոյդ նախանձախնդիր, անձնուէր եւ պատուական ան-  
դամներ, այսու կը վաւերացնենք ու կը հաստատենք անոնց ընտրութիւնն  
ու պաշտօնները հետեւեալ կերպով.-

Տիարք	Պօղոս Զօպանեան	-	Ատեմայետ
	Յարութիւն Գալայճեան		Փոխ-ատեմայետ
	Սարգիս Զիրքիճեան		Գանձապահ
	Թաղէոս Միքայէլեան		Բարտուղար
	Արշակ Ազարեան		Խորհրդական
	Յովհաննէս Լեւոնեան		Խորհրդական
	Թորոս Բէօթօղլանեան		Խորհրդական

Կ'օրհնենք նորակազմ հոգաբարձութեան բոլոր անդամները եւ  
վստահ ենք որ անոնք պիտի աշխատին մեր սուրբ եկեղեցւոյ պայծա-  
ռութեան եւ Աստուծոյ փառքին համար: Մաղթելով կարողութիւն եւ  
յաջողութիւն ի Տեառնէ, կը ցանկանք որ անոնք բոլորեն արդիւնաւոր  
զործունէութեան շրջան մը:

Մնամք սիրոյ ողջունիւ

Առաջնորդ Հայոց Ամերիկայի